


ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » 4 և ցանկեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր միկ
հարույժ) Տարեկան 14 ֆր. ցանկեայ 7 ֆր.
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Համայն գրամ հեռացն դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուլկարիա)
Редация на ВѢСТНИКЪ
И р а в у н к ъ
ВАРНА (България)

Rédaction du journal
„Ira vounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր ևս յարմար դատաւո-
նեալ միայն կը հրատարակուին աւ-
րոյշովի կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեւսեալի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ԲԱՂԴԱՍԻՆԴԻՐՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆԵՐ ԶԵՆ

Մեր ազգային ինքնուրուշու-
թիւնը հաստատ պահելու և հայ-
րենիքի սուրբ դատը պաշտպանե-
լու եռանդը բնականաբար ամեն
դասակարգի հայ սրտերու մէջ ա-
ռաւել կամ նուազ կը վառի, ի բաց
առեալ փոքրաթիւ մաս մը որ
գոյնաւորաբար գրեթէ ամեն դա-
սակարգի մէջ իր ներկայացուցիչը
ունի՝ որ կամ իր գարշելի անձը
նօթութենէ փրկելու և կամ ուրիշ
աններելի պատճառներով ազգային
իրաւանց դաւաճանող հանդիսա-
ցած է ու կը հանդիսանայ. բայց
ազգին այս աղիւստ ու փոքրաթիւ
մասը միայն թուրքիոյ մէջ իր գո-
յութիւնը կրնայ պահպանել. որով-
հետեւ միայն հոն իր սխրագործու-
թիւնները կարող կըլլայ գործադ-
րել. զի Տաճկաստանէն դուրս ի-
րեն այդ զաւրի պաշտօնը գոր-
ծադրելու ոչ գործ կրնայ գտնել,
ոչ ասպարէզ. հետեւաբար չեմ
կարծեր որ այդպիսիները արտա-
սահմանի մէջ նկատելի թիւ մը
կազմեն, և գտնուողներն ալ արդէն
իրենց գոյնը չուտով դուրս կու-
տան: Ահա այս պատճառներով
մեր ստորեւ նշանակեալ դասակար-
գերու թուումէն այդ փոքրամաս-
նութիւնը դուրս պիտի ձգենք,
որ զրեթէ միմիայն Տաճկաստանի
յատուկ կը մնայ:

Արտասահմանի ամեն հայ դա-
սակարգ ըլլայ Պուլկարիա, ըլլայ
Ռուսիայի, Եգիպտոս ու Ամերի-
կա, ազգային ինքնուրուշութիւնը
և տոհմային արժանապատուու-
թիւնը պահպանելու քիչ թէ շատ
եռանդ մը սէր մը կ'ունենայ ու
կ'զգայ իր մէջ: Բայց անոնց
անհատական զգացմանց չափը ի-
րարմէ տարբեր կրնայ ըլլալ:

Արդ թուենք դասակարգերը.
Դասակարգ մը կայ որ ազգա-
յին ամեն բարենպատակ ձեռնար-
կութեանց ամենայն սիրով կ'օգնէ
ու կը նպաստէ թէ նիւթապէս և
թէ բարոյապէս: Սա ազգին կեն-
սատու ու շինող մասն է:

Դասակարգ մըն ալ կայ, որուն

եռանդը աւելի ցամաք է կամ ա-
զահութեան ախտէն վարակուած
կը ջանայ իր դիրքին ու կարողու-
թեան հակառակ ամենաչին նը-
պաստ մը տալէ ինքզինք աղիւստ:
Սա ազգին անօգուտ բեռ մը ե-
լող մասն է:

Ասոնցմէ զատ կայ ուրիշ դա-
սակարգ մըն ալ որուն տաճկանը
ամերիկեան թերթ մը սա կերպով
կը գծէ.

«Մի քանի ուսեալ հա-
յերու խումբ ալ կայ որ ամենէն
չահախնդիրն է և ճարպիկ թէ իր
զաւրելի գոյութիւնը ազգի դրա-
մով պահելու և թէ ազգի անփորձ
անհատներու աչքին կրակոտ ազ-
գասէրները երեւալու մէջ: Ասոնք
տաքալուս ազգասէրներ կը կտրին
ու հրապարակ կուգան երբ հայու-
թեան գլխուն եկած աղետը կը
ցնցէ ամերիկեան ժողովուրդը որ
կսկսի ողորմատու արտապրու-
թիւն մը ունենալ գէպի հայը.
այս դիմակաւոր ազգասէրներն ե-
կեղեցիներու, սրահներու (և թեր-
թերու մէջ) պէրճախօս հրապա-
րակախօսներ կըլլան և տօյլունե-
րու ծրարներ կը հաւաքեն յանուն
հայութեան թշուառութեան և
զանոնք ամբողջովին կամ մասամբ
իրենց զրպաններն կը լեցնեն: Եւ
պայծառ օր մըն ալ ասոնք կեղծ
կը յայտարարեն թէ իրենք քաշ-
ուած են ազգային գործերէն և
անձնական գործերով պիտի զբա-
ղին, մուկին հոլանտական պանի-
րին մէջ ձգնելու պէս: Վանի,
Զէյթունի, որբերու ինպաստ
հանգանակութիւններ և հանգէս-
ներ կան, այս տիպերէն մէկը
սէնթ մը չի տար:»

Այս կարգէն են աղա հանրամեն-
եւ գնչուներ պոռտցող կարգ մը
հրապարակագիրները որոնք ազգին
գրամովը ապրած ձրիաճարակներ
են և կուզեն մինչեւ վերջը ժողո-
վրդեան բարի և ողորմող արտա-
գրութիւնը միմիայն իրենց գո-
յութեան պահպանման գործածել.
և երբ ժողովրդեան մէկ մասը ել-
նէ հաշիւ պահանջէ, զեղծութիւնը
մատնանիշ ընէ ու փաստացի թըն-
նադատութիւններ հրապարակ նե-
տէ, յանկարծ այդ ձրիաճարակնե-
րը հայհոյութեանց ծրարը կը բա-

նան լուսանքներ կը տեղացնեն
պարկեշտ, ողորմած անձնաւորու-
թեանց դէմ, որոնց դրամովը ան-
չափ ատեն ապրած էին: Ասոնք
երբ կը տեսնեն թի իրենց դիրքը
կը խախտի ու բերաննուն հացը
գետը կ'իյնայ. յանկարծ կեղծն
շուրջ պատրել, ժողովրդեան մէկ
դասակարգը միւսին ձգել, քահա-
նայի և վարժապետի խնդիր յա-
րուցանել, որպէսզի այդ միջոցով
կարենան մաս մը միաժիտ ալ
իրենց կողմը քաշել, այսօր հրա-
պարակա կղերին մօլութիւնները
ամենախիստ լեզուով կը ձաղկեն,
իսկ վաղը կղերի անբարոյական
մէկ տիպարին պաշտպան կը հան-
դիսանան. իրենց այլազան սըխ-
րագործութեանց դէմ ամենապար-
կեշտ քննադատութիւն մը լսելու
չեն հանդուրժեր ու փոխանակ ա-
նոնց փաստացի պատասխանելու փո-
ղոցային սրիկաներու յատուկ հայ-
հոյութիւններ կը տնջացնեն: Ա-
սոնք ազգին դրամովը ապրող բաղ-
դախնդիրներ են որ ազգասէրներ
չեն կրնար ըլլալ: Ասոնք հայրե-
նիքներն ու ծնունդներն անյայտ
մակարոյծներ են, ու հայու-
թեան ամենէն աւելի վնասակար
տարրին կը պատկանին. անոնք
համեստ յեղափոխականներ չեն, ա-
նոնք պարկեշտ հրապարակագի-
րներ չեն այլ ցած բախտախնդի-
րներ:

Այսպիսիները չուտով եւ լաւ
ճանչնալու համար ժողովուրդին
ամենաառաջին հարցումը սա ըլ-
լալու է. «ցարդ ո՞րու հաշուով
ապրած էք և ասկէ ետքը ձեր
ապրելու միջոցը ի՞նչ է?» Ահա
այս հարցման պատասխանը ամեն
ինչ կը լուծէ ու ձրիաճարակը
բախտախնդիրի մերկութեամբ
դուրս կուգայ:

Մենք այս տողերը գրելով բը-
նաւ նպատակ չունինք անկեղծ ու
անշահախնդիր յեղափոխականները
ակնարկելու. ասոնց համար մենք
խորին յարգանք կը տածենք:

Սոսր

ՀԵՐԶՈՒԱՅ ՄԵ ՕՐԹՈՏՈՔՍ

ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՄԷՋ

Մէկ կողմէ ռուս կառավարու-
թեան և Ռուսիոյ Սինոդին, և
միւս կողմէ կ'Պօլսոյ տիեզերա-
կան (յօյն) Պատրիարքութեան մի-
ջեւ վէճ մը ծագած է, որ կրնայ
խիստ ծանր կերպարանք առնել:
Այս վէճ կրօնական հանգամանք
ունի, բայց ունի նաեւ իր քաղա-
քական կողմն որ յոյժ կարեւոր է:
Ասկից քանի մը շաբաթ առաջ
պատգամաւորութիւն մը Ռասքօլ-
նիք կոչուած կրօնական մեծ աղան-
դին, որ Ռուսիոյ մէջ քսանեւհինգ
միլիոն անդամ կը հաշուէ, կ'Պօ-
լիս գնաց երկար յիշատակագիր
մը մատուցանելու տիեզերական
Պատրիարքութեան, որ ամբողջ
Օրթոտոքսութեան գերագոյն հե-
ղինակութիւնն է: Ռասքօլնիքներն
այս յիշատակագրով կը թախան-
ձեն Ֆէնէրի Սինոդն որ ճանչնայ
իրենց կղերին անդամներուն նուի-
րապետական աստիճանը, այսինքն
իրենց քահանաներուն ձեռնադ-
րութեան օրինաւորութիւնն և նը-
կարագիրը, զոր Ռուսիոյ Սինոդը
մերժած է միշտ ճանչնալ Ռասքօլ-
նիքներ հերձուածողի տեղ ղենելով:
կ'Պօլսոյ Պատրիարքութիւն չէր
կրնար նկատողութեան չառնել
խնդրանքը քսանեւհինգ միլիոն
քրիստոնէից որք ինքզինքին ա-
ւելի օրթոտոքս կը համարին քան
մնացեալ բոլոր ուսման, ինք-
զինքներն կը կոչեն հին հաւատա-
ցեալ, և կը մերժեն այն նորու-
թիւնները զորս 1667ին Մոսկու-
այի մետրոպօլիտ Նիքօն և ուրիշ
ռուս եպիսկոպոսներ մտցուցին
ռուս եկեղեցւոյն մէջ, անոր ըս-
կընական տիպարն փոխելով:
Պատգամաւորութեան անդամք
այս մօտք խօսեցան, և կե-
րուի թէ ճիշդ է իրենց ըսածն.
որովհետեւ Պատրիարքարանը
լուրջ նկատողութեան առնելով
այս խնդիր, յանձնաժողով մը
կազմեց քանի մը եպիսկոպոսներէ
նախագահութեամբ Հռոդոսի մետ-
րոպօլիտն, խնդիրը քննելու և
տեղեկագիր մը ներկայացնելու

Սինդիկատը, որ ի վերջոյ պիտի տայ իր վճիռը. Ռասքոնիքները բարի օրթոթոքս կըսեն իրենք իրենց համար, և իբրեւ օրինակորապէս կ'ազմուած եկեղեցական մարմին մը չեն ճանչնար Ռուսիոյ Սինդիկատը իւր խորշին ու է յարաբերութենէ ռուս կղերին հետ, բայց ընդհակառակն կը փափաքին ընդունիլ յայն, ռուսին, սերպ և ուրիշ օրթոթոքս քահանայներուն կամ և պիտի պատմեն օրհնութիւնը. Այն պատճառաւ մանաւանդ կը յուսան որ Ֆէնէրի Պատրիարքանք պիտի ընդունի իրենց կղերին նուիրապետական կարգն, որովհետեւ այդ նուիրապետութեան հիմը դրած է կ. Պօլսոյ Պատրիարքանքէն Կախում ունեցող եպիսկոպոս մը, Ամբրոսիոս Պոսնիոյ մետրոպօլիտն, որ Ռասքոնիքներուն առաջին քահանայներ ձեռնադրած է և առաջին կպիսկոպոսներն օծած է. Ռուսիոյ կը տեսնուի թէ խնդիրը շատ ծանր է, միեւնոյն ատեն փափակ է ինքն Ֆէնէրի Սինդիկատը ընդունի Ռուսքոնիքներուն պահանջմանց օրինակութիւնը, Ռուսիոյ Սինդիկատը և ռուս կառավարութիւնն ուրիշ բան չեն կրնար ընել, ինքն ոչ համակերպիլ այդ վեհապալն վրէժին, օրթոթոքս եկեղեցիներուն գերագոյն իշխանութեան կողմէ տրուած, ապա թէ ոչ երկու և կեղեցեաց և երկու Սինդիկատներ միջեւ սատարիկ վեճ մը կը ծագի, որ կրնայ անհաշուելի հետեւանքներ ունենալ օրթոթոքսութեան համար:

ՊՈԼԿԱՐԻՈՑ ՊԱՐՏԲԵՐԸ

Երկրիս եղեւնուական նախարարութիւնը խաղաղարարական անցնել օր ներկայացուց տեղեկագիր մը կառավարութեան պարտքերը քննող, որ ձեռնարկեալ կերպով կ'անկոխի:

Պոլկարիա 1898 յուլիս 1ին Բարիգի Միջազգային պանքէն տասը միլիոն ֆրանք փոխ առած է, 1898 նոյեմբեր

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (21)

ԺԱՄԱՆԱԿԱԿՑ շԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Բանտէն Մինաս ուղղակի քայմաքամին մօտը գնաց որ տունն էր և եղբւրցիները անոր պատմեց:

«Շատ յամառ պղծխի տէր մարդ է եղբի աստիկայ, ըսաւ Ռիզա էֆէնտի, բաւական քաջութիւն պէտք է ազատութիւնը աղջկան մը հետ չփոխելու համար, ես թիւրքիսներուն մէջ ասանկ մարդերու քիչ հանդիպած եմ: Ինչ վրայ ալ չափեմ աւելի կը ցաւիմ Մինաս աղա, բայց ի՞նչ օգուտ, ասկայն իրաւ որ սա շատ զարմանալի է, իրաւ սա աղջիկը ասչափ կը սիրե՞ս:»

— Խնդրեալու աստիճան էֆէնտի, ա՛հ:

Քայմաքամը Մինասին աննկատելի ըլլալու զգուշութեամբ՝ անտարբերութեամբ ծիծաղեցաւ ասոր վրայ, անոր համար իր օրսին այդ կացութիւնը ամեն կերպով անըմբռնելի էր, իրեն

Յ1ին երկու միլիոն ֆր. վիէնայի Լանտէրպանքէն ու վիէնայի Պարքվէ րայնէն 750,000 ֆրանք և 1899 մայիս 21ին Լանտէրպանքէն 5 միլիոն ֆրանք:

Պոլկարիա կը պարտի Ռուսիոյ 2,353,000 ֆր. գէնքի և ուրիշ ծախքերու համար. Օսմ. Հանրային Պարտքի վարչութեան՝ 3,163,000 ֆրանք Արեւելեան Ռումէլիի տարբին համար՝ 1898 յուլիսին մինչեւ 1899 յուլիս, 5,047,897 ֆր. զանազան յանձնարարներու և Բուրսի ու ուրիշ գինազարծարաններու, 6,674,000 ֆր., Պոլկարիոյ ազգային պանքային, 3,618,000 ֆր.: Պոլկարիոյ երկրագործական արտադրանքներու, 2,551,000 ֆր.: թղթատարական օտար վարչութիւններու, 1898 մայիսէն մինչեւ 1899 մայիս, 235,000 ֆր. ներքին մանուտարութեան, 2,193,000 ֆր.: համայնքներու անտուկներուն՝ 1898 հոկտեմբերէն մինչեւ 1899 մայիս գանձուած ներքին մաքսերու համար, 483,000 ֆր.: դաւաճային միայուն յանձնարարներու, 1,079,000 ֆր. կարկուտի վնասներուն իբրեւ. հատուցում և 110,000 ֆր.: առեւտրական Սինեակներուն: Ընդամենը 45,256,897 ֆր. Աստուգութեան կառավարութիւնը 3,948,000 ֆր. վարկի յանձնարարութիւն մը ունի գինաւորական վարչութեան հանդէպ: Նաև 41,962,000 ֆր. ի պէտք ունի աւարտելու համար նաւահանգիստներու և երկաթուղիի վերելու սկսած շինութիւնները: Այն 17,750,000 ֆր. ին համար գոր Պոլկարիա կը պարտի պանքաներուն, կառավարութիւնը իրենէ դուրս տուած էր 36 միլիոն ֆր. ի պոլկարական պարտութեան: Այն պարագային երբ կառավարութիւնը չը կրնայ օրոշեալ պայմանաւորումն ու թ օր ետքը վճարել իր պարտքը, պանքաները իրաւունք ունին պարտաւճարութեան օրումն պիտի պայմանաւորուին որ անոնց պարտական մընայ, ինքն վաճառման արդիւնքը բաւական չըլլայ պարտքը գոցելու:

Երկրաւորական նախարարին այս տեղեկագիրը կարգադրեցին ետքը Զանքովեան երեսփոխան Պ. Սարաֆովի կ'մտախոս պայմանագրութիւններուն գէտ խօսեցաւ: «Երեսփոխան նախարար կը ըսէ թէ, յարկ երեսփոխանը, երկրին երեսփոխան վիճակը գոհացուցիչ չէ, և ինքն այդ պայմանագրութիւնները չընդունելին, օտարները պիտի կ'նքեն

հանրային անտուկները, բայց այդ պայմանագրութեան ընդունելութիւնը հիմնական դարձան մը պիտի չընէ:» Պ. Նիկիւլով Աստուգութեան խօսքը ընդմիջելով ըսաւ: «Մոգովուրդը պիտի ծախենք:» Պ. Սարաֆովի ըսաւ. թէ այդ պայմանագրութիւնը հին պայմանագրութեանէն աւելի անարգար կերպով պատրաստուած է և թէ Ռումէլիի երկաթուղիին գծերը վարձակալութեան տալու ինչպիսիք ոչ միայն անարգարա նալի է, այլ վտանգաւոր: Պ. Նաչէվիչ պայմանագրութիւնը պաշտպանեց ըսելով որ երկաթուղիի գծերուն՝ ընկերութիւններու կողմէ չ'անարգարութեան մէջ վտանգ մը չ'կայ և այլն:

Այս կողմից թեր և գէտ վիճարկում թիւններէ վերջ, ինչպէս մեր նախընթաց թուով իմացուցած էինք, փոխառութեան հարկ պայմանագրութիւնները քուէից աղաւելութեամբ ընդունուցան:

ԹՂԹԱՎՑՈՒԹԻՒՆ

Պոլկար, 18 յունիս

Վերջապէս Պոլկարի հայութիւնը սկսաւ շարժիլ. ու Ազգ. գործերը քանի մը գաղափարապաշտներու ձեռքէն ազատելու աշխատիլ, որոնք երեք տարի շարունակ բարձր վարժարանն ու եկեղեցին շահագործեցին և անկերպորան վիճակի մը մէջ ձգեցին ամեն բան, ու հեռացան:

Քաղաքիս ողջամիտ գաղափարը վերջապէս ալ ձանձրացած այս անկարգութիւններէն և ուղղով միանգամ ընդ միշտ ազատիլ բախտախնդիրներու ձեռքէ, անցեալ կիրակի հաւաքուելով, պատրաստուած եւապատիկ ընտրելեաց ցանկի մը առաջնորդութեամբ իր քուէներն տուաւ և քուէից առաւելութեամբ թաղական ընտրուեցան հետեւեալ անձնաւորութիւնները.

- Տիար Սրապ Աստուածատուրեան
- Միհրան Գրիգոր
- Միսակ Թորիկեան
- Սահակ Կիրճեան

Հերոն

« Թակոր փափաղեան
« Գալուստ Ունեհան
Վերոյիշեալ անձնաւորութիւնները արդէն պատուաւոր դերք մը կը զբաւեն քաղաքիս մէջ. և ասկէ առաջ Ազգ. գործոց մէջ ցոյց տուած իրենց գործունէութեամբ ամենուն ալ համակրութեանը արժանացած են: Պոլկարի գաղաւթը միշտ փնտռած է ու կը փնտռէ անցած օրերու եկեղեցւոյ ծաղկեալ և վարժարանի յառաջագնաց վիճակը, և յոյս մեծ ունի որ դարձեալ պիտի տեսնէ այն օրերը շնորհիւ արդի թաղականութեան: Երբ ժողովուրդը քուէ տալու համար եկեղեցի կը գիմէր, դրան մէջ ժամկոչը կանգնած կաշխատէր սրվաճիւններու և այլ անոնց նման արարածներու անունները գրուած թղթեր քշել գաղափարողի օգտուելով ունեց զրի չգիտնալէն, ու երբ դարձեալ իրենց նպատակին չը հասած ըլլալին կը նկատէին քուէներու արդիւնքէն, հանրածանօթ արարած մը, որ մեծ դեր կատարած է իր լուսաւորութիւններով ազգային գործերուն մէջ, կը պոռար, «կառավարութեան միջոցով ձեզի դուրս պիտի վնասեմ»: Այս այն անձն է որ անցեալ տարի չորս պատուաւոր անհատներու տեղէս աքսորուելուն պատճառ եղաւ վատարար Տեղաւոր հանրածանօթ դատաւոր կը շարունակէ իր յարմար կեանքը. նարկիլէ, թղթախաղ ցերիկները. կըսեն թէ վարժարանի գաղափարութիւնները գիշերը կը կատարէ («). չմոռնալ նաև Արմենական կուսակցութեան գանձանակը, որ պարբերաբար սրճարանները պտուղներ կուտայ, ստակ հաւաքելու և ուղղը փրկելու համար:

Շատ ցաւով իրենց մըն է որ ուրիշ տեղերէ աւելի Պոլկար կեդրոնաւորելու եղած է միշտ իւր չափով յիշատակաւորներու և բախտախնդիր աղտոտ արարածներու:

Հերոն

հոգիի ամենէն աւելի պաշտելի արարածը լինէ իսկ նաև և զքեզ հրեշտակային վերացումներէ բերաւ զարչիլի ձի թաղաւոր իրականութեան մը վրայ թաղեցուց: Վահրամի տունը խնդր կարած են. հայրը և մայրը հոս հոն կը գիմեն անոր մասին տեղեկութիւն մը ստանալու համար, ահագնութիւն չկայ: Դաւաճան Մինասի յոյրը Շուշան Հրանդի համահաւասար հոգեկան տաղանդի մէջ է. անոր զգացած ցաւը անպատմ է, ինք էր որ Վահրամի փոխուստը թիւղադրեց և ինքն է որ այս բաժանումին հետեւ անքն եղող հոգեմանջ օրցի մը իր կեանքը կրճելը կը զգայ, աչքերը իրենց վատարապետութիւնը կորուստ եմ. գէտ քի կարմիրները մէկ երկու օրումն մէջ նուազել են. բայց կապաղապի գիծեր կը շրջանակեն ականդոթը, մեքենայ մըն է դարձած: Ուսուցում, իրականութեան գործիւն մէջ ալ իր չափը չէ պահած. իր վրայ տեսնուածները անխուսափելի հիւստի մը նշաններ են: Վարդ մըն է ինքը, օձ մըն է իր եղբայրը Մինաս որ արկին Սաթիկի

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

«ԻՐԱՆԻՆՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆ

Պ. ԳԱՍՊԱՐԻՆ

Ձեր ինձ տուած խորհուրդը
շարժացի, պատասխանը իր մէջն
է. Պ. Գասպար, աշակերտի մը
ուղեղը եթէ զարգացած չլլայ իր
գործածին գիտակցութիւնը կըր-
նայ ունենալ. թուականութիւնը
գործիական մի արհեստ չէ որ մե-
քենարար արդիւնք արտադրէ:

Վերահասու եղած եւ ձեր դի-
տաւորութեանը ինձ հետ ինչպէս
շատերն ալ, ձեր միտքը չը պար-
տկուիր որչափ ջանաք սքողել
զայն:

Իրողութիւնը մէջտեղն է. քը
նազնիրն ձգենք ֆազիլով խօսինք:

Ա. Դուք, նախորդ շրջանի բն-
նութեան ներկայ չէիք, հետեւա-
բար աշխատութեան արդիւնքն
ալ չէք կարող գնահատել:

Բ. Իմ գառնէս աշակերտներէն
միայն մէկուն քննութեան ներկայ
գտնուեցաք, առով չէք կարող
ամբողջ 34 աշակերտներուն ըրած
յառաջդիմութիւնը չափել. զորս
եթէ հասկնալ կուզէք կրնաք դի-
մել Պ. Տնօրէնին, և անկէ առնուլ
հարկուոր ծանօթութիւններն, կը-
նաք նաեւ դիմել ձեր բարեկամին,
Տիար Վարդօր որ յետ քննու-
թեան շնորհաւորեց զիս տուած
աշխատութեան համար:

Այդ Գարնի շնորհաւորութիւ-
նը իմ վարձքս կը սեպեմ, իսկ
ձեր խորհուրդը ձեզ կը վերա-
դարձնեմ, խնդրելով որ երբ այս
տեսակ հարցերու մէջ զրիչ ձեռք
կառնէք, ամփոփեցէք մտքերնիդ
և մեքենաբար մի հետեւիք ձեր
թաքուն նպատակներուն. բազա-
ւոր եւ որ գէթ ես ձեր գրու-
թեանց վարդը եղող հայհայանացը

չարժանացայ:

34 յունիս 99

Ս. Մարգարեան
Վառնա

Յ. Գ. — Գրութեանս մէկ օրի-
նակն ալ «Շարժում»-ի խմբագրու-
թեան զրկած եւ ի հրատարակու-
թիւն:

ԼՐԱՔԱՂ

Եւրոպայի հայ գաղթականու-
թեանց հոգեւոր հովիւ Տ. Գեորգ
եպիսկոպոս իւթիւնքեան որ Բարի-
զէն Մանչեսթըր գացած էր քա-
նի մը շարժութ առաջ, այս օրերս
Լոնտոն պիտի ուղեւորի՝ այնտեղի
հայ գաղթականութիւնն ալ հով-
ուելու և եկեղեցական արարողու-
թիւն կատարելու համար: Ման-
չեսթըրէրէն ալ գաղթիկները յա-
րաւր ընդունելութիւն մը ըրեր
են այցելու Սրբազանին:

— Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն
Չմկիածագի կողմուած հեղինակ-
ներուն համար զրկուած գոյքերը
Քարբէրդի առաջնորդարանին մէջ
վար գրուելով, ծախուեր են: Դը-
րօնական ժողովը այս մասին իս-
լաքագիր մը ընդունած ըլլալով
խիստ քննութիւն մը պահանջած
է որպէս զի զեղծումին հեղինակ
ներն երեւան երկն ու պատժախ
ի հարկին Քարբէրդի առաջնորդն
ալ Պոլիս պիտի կոնչուի անձուր
բացատրութիւն տալու համար:

— Բագուի հարուստ ազգային
ներէն Պ. Ե. Բաղդադեան յոճի ա-
ռեր է հոգալ քաղաքին մէջ կա-
ռուցուելիք եկեղեցիին շինութեան
ծախքը:

— Կովկասեան Բարեգործական
Ընկերութեան կեդրոնական ընդ-
հանուր ժողովը Թիֆլիսի մէջ զու-
մարուելով, ընկերութեանց մասին
կառավարութեան գծած նոր օրէն-
քին տրամադրութիւնները նկա-
տողութեան առաւ. ըստ որում

ընկերութեան գործառնութիւննե-
րը միայն Թիֆլիսի մէջ սահմա-
նափակել հարկ ըլլալով, ստիպուե-
ցաւ այդ ընկերութեան գործու-
նէութեան շրջանը փակել և անոր
տեղ Թիֆլիսի հայոց հա-
մար Բարեգործական մի ընկերու-
թիւն հաստատել:

— Կ. Պոլսոյ կէտիկ-բաշայի
Ազգ. երկսեռ վարժարանաց մէջ
գալթակցեցող զէպքեր պատա-
հած ըլլալով Պատրիարքարանը Ու-
սումնական խորհուրդին հրահան-
գած է խիստ քննութիւն մը կա-
տարել: Մինչեւ քննութիւնները
աւարտին ու յանցաւորները երե-
ւան գան որչափ է այդ վար-
ժարանները գոցել և յանցապարտ
ուսուցիչները արտաքսել ու պատ-
ժել տալ:

Պոլսոյ թերթերը կըսեն թէ
այս առթիւ տարածայնուած անա-
խորժ զրոյցները որոնք կը շրջին
թաղին երկսեռ վարժարանին կըր-
թական պաշտօնայինքն ուսմանց
անուան շուրջը, խանգարեցին զպ-
րոցին ներքին բարեկարգութիւնը
և զուրան ալ, հանրութեան մէջ,
գալթակցութիւն պատճառեցին:
Ինչպէս կերեւալ խնդիրը խիստ
ծանր է որ մեզ իրաւունք կուտայ
անգամ մըն ալ յիշեցնել մեր ըն-
թերցողաց թէ վարժապետէ մը
մեր առաջին պահանջը ըլլալու է
իր անարատ և օրինակելի բար-
յականութիւնը:

— Տ. Մինաս Չերազ «Իրա-
ւունք»-ի մէջ կարգացած ըլլալով
որ Ռուստուքէն 400 ֆրանք զըր-
կուեր է Լա Հէյի պատուիրակին,
կը խնդրէ մենէ ծանուցանել թէ
ինք վառնայէ վատ ոչ մի քաղա-
քէ դրամ ստացած է:

Մենք կ'անդորրացնենք Տիար
Չերազը իմացնելով որ Ռուստուքի
400 ֆրանքը վառնայի միթիւնկի
Յանձնախումբին զրկուած է և
սա պատրաստ է յառաջիկայ շաբ-
թու իր հաշիւներն հրատարակու-

թեան տալու:

— Հնչուկեան Յեղ. կուսակցու-
թեան Լորէնսի մասնաճիւղը հրա-
տարակուսեան համար զրկած է
մեզ յայտարարութիւն մը, որով
կըսէ թէ նոյն կուսակցութեան
Նիւ Պրիփորթի մասնաճիւղէն իրեն
զրկուած նստակ մը տարբեր կու-
սակցութեան մը կողմէ գոյցուած
է «սօքիւման մը ձեռք բերելու
նպատակաւ». և այս պատճառաւ
գոյցողներուն դէմ ծանի յարձա-
կունք կ'ընէ, որոնց մենք ար-
ձագանգ չենք կրնար ըլլալ քանի
որ մեր նպատակը կուսակցական
ներու իրար հարուածելու միջոց
ըլլալէ շատ տարբեր է:

ԱԶԴ

Ազգականը կըթարանի տարեկան
բերանացի հարցաքննութիւնք պի-
տի սկսին յառաջիկայ երկուշաբ-
թի 28 յունիս և պիտի աւարտին
յուլիս 4:

«ԻՐԱՆԻՆՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

◊ ◊ ◊

«Տիգրիս» թերթի խմբագրու-
թեանց կը խնդրուի որ ամէն շա-
բաթ մէյ մէկ օրինակ զրկէ մեզ
փոխանակ 2-3 շաբաթ միանգամ
զրկելու:

— Տ. Ն. Տ. Գեօտեանէն.— Ստա-
ցանք. շնորհակալութիւն. կը խըն-
դրուի որ մնացեալն ալ փութա-
ցնէք:

— Տ. Գ. Թ. Փ. Պոլիս.— Ստա-
ցանք. նոյն շնորհակալութիւնը և
նոյն յանձնարարութիւնը Ձեզ ալ:
— Տ. Ս. Ե. Կրեմլ.— Ձեր վե-
ցամահայ բաժնեգիրն ստացած ենք,
թերթերը կանոնաւորապէս կը
զրկուին:

— Տ. Ա. Պուրկաղ.— Գոհ ենք
Ձեր հոգածութեան մասին. նոյն.
իմաստ լիցիւնցութիւն մը ար-
դէն մեզ հասած էր և հրատարա-
կեցինք զայն:

առաքինի ծոցին սնած իմ մըն է, ար-
դիւնք հոգեբանական անհասկնալի ալ-
լանգակութեան մը որ կը ջրէ բնա-
զանցական ու բնախօսական շատ մը
տարազները. հետեւէն եկող ժառան-
գականութեան մը կարելիութեան մի-
այն տեղ ձգելով. կը չեղանք ալ մէկ
քանի կէտերը որովհետեւ Բարձրագոյն
ընտանիքը դարէ մը առաջի գոյութիւն
ու նէր Ակնի մէջ ամեն կերպով պատ-
ուաւ օրի պաշտօն կը վաշխէր: Տիկին
Սաթիւնիկ ամեն արժանաւոր մօր պէս
շատ կանուխէն նշանակեց իր ազգի
Ֆիդիկական փոփոխութիւնները որ
հոգեկան փոփոխիկ մը հետեւութիւնը
պիտի ըլլար. իր պատճառը հասկնալու
համար ըրած հարցա. միտքուն «մայրիկ
բուն մը չունիմ» պատասխանը առա-
նակէ ետքը. տիկին Սաթիւնիկ ասով
չգոհացաւ. Շուշան աւելի չխօսեցաւ:
պարկեշտ գաւառացի հայուհին, ա-
նոնցմէ էր որ իրենց ներքին ցաւերը
ոչ ոքի հաղորդելու քաջութիւնը չու-
նին նոյն իսկ իրենց մօրը, որ արթուն-
քի հասնելէ ետք ուրիշ չըջանալներու
մէջ ազգիւնը միակ խորհրդակցիլը և
խորհրդատուն է: Յետ այնու Շուշան

թուանոր օձի մը պէս փախաւ իր
եղբորը ներկայութիւնէն: Շատ քիչ
անգամ պատահեցաւ անոր եւ գրեթէ
հետը չխօսեցաւ: Մինաս զրոյց քրոջը
հոգին, սակայն անիկոյ Շուշանի վա-
րձի համար զգացած համակրանքին,
միտքին տեղեակ չէր, այնպէս կարծեց
որ անոր իրմէ խոստովել պարզապէս
Յովհաննէս աղան բանտարկել տալէն
առաջ եկած էր. իր կարծիքով տեսնէ
մը ետքը Շուշան իր եղբորը նկատ-
մամբ բռնած բնիկացի պիտի փութէր:
Քանի մը անգամ Մինաս փաղաքոյ
բառերով քրոջը սիրտը տանելու ջանաց
առանց որոշ արդիւնքի մը հասնելու:

ԺԵ

Ակնի բանտին ժամացոյցը գիշի-
րուն վեցը զարնելուն հետ դրանք ու-
քի թփրատք մը լսուեցաւ. չորս հո-
գիներ բանտի շէնքէն ներս մտնելով
Յովհաննէս աղան արգելադրանին դու-
ռին առջեւ կանգ առին. ստոյգմէ մէ-
կը, բանտապահը սենեակին դուռը
բացաւ. Յովհաննէս աղան հակառակ
առջի երկու երեք գիշերներու անցու-
ցած վրդովմանքուն, խորունկ և

հանգաւոր քունի մէջ էր. բանտապահը
իրեն մօտենալով արթնցուց զայն եւ
իրեն հաղորդեց կառավարական այն ո-
րոշումը ըստ որում զինքը Խարբէրդ
պիտի զրկէին Մէջլիսի մէջ գատուե-
լու համար:

«Ուրեմն գաւառային ամեն ըսածնե-
րը ճիշդ են եղեր միմայ քիթին տա-
կէն. ա՛խ, կինս եւ Հրանդը որին
պիտի ձգեմ, ո՛վ պիտի պաշտպանէ
զիրենք... ով գիտէ ո՛ր աստիճան
մտաւանջութեան մէջ են հիմայ իմ
վիճակիս մասին. ի՛նչպէս տեղեկու-
թիւն մը առն իրենց գտնուած կացու-
թեան վրայ:»

Վրան ստակ ունէր. մէճիւ մը հա-
նեց և բանտապահին ափը դրաւ:

«Նշա՛ւ, ա՛ռ սա ստակը, միայն
քիզմէ շնորհ մը պիտի խնդրեմ. երկ-
տող մը պիտի դրեմ, պէտք է որ զոյն
ընտանիքիս ձեռքը հասցնես:»

Եւ բանտապահին հաստատական պա-
տասխանին վրայ բաճկոնակին գրպա-
նէն թղթի մը կտոր հանեց. բանտա-
պահը իր կողմէն մատիւ մը ներկա-
յացուց որով սա մէկ քանի սուղիւր
գրեց:

«Ձիս աս գիշեր Մէջլիսէ կը տա-
նին քաղաքական յանցաւորի ամ.
«բանտանութեան տակ գատուելու հա-
մար. շուտ եղբօրս գրեցէք որ գայ
«ձեր մօտը մնայ. յոյսերնիդ Աստու-
«ծոյ վրայ դրէք. զգուշացէք տիկին
«Սաթիւնիկի որդին հողով Մինասէն.
«Լաւ գիտցած եղէք որ զժաղդու-
«թեանս միակ առարկան ինքն է յար-
«մար առիթով պիտի աշխատիմ տե-
«ղեկութիւն տալ ձեզ. քովս բաւա-
«կանաչափ ստակ ունիմ. սակայն
«թերեւս աւելին պէտք ունենամ
«ասոր համար տասը օր ետքը Մէ-
«զիլէ իմ անուշաղմ տասը օսման.
«ոսկի զրկեցէք. համբոյրներ:»

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ամբաստանեալը թուղթը բանտա-
պահին յանձնելէ առաջ անկէ հրդու-
ալ պահանջեց չորս խոսառումով չը բա-
ւականանալով, պէտք է ըսել բան-
տապահը իր խոսառումը չդրժեց. քանի
որ երկրորդ օրը առաւօտուն իր ձեռ-
քով Յովհաննէս աղան թղթիկը տա-
րաւ յանձնեց տիկին Վերգինէին:

Շ. Կամսարական

Շարունակելի

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. П. Войниковъ